գետին չըր վերցընէ, չուրի չոքեր կ'չքուէր հողի մէջ։

Մհերն ըսեց.—Ես ի՞մալ էնիմ. գետին իմ ձին չ'վերցու։

Քշեց ձին ու էկաւ մէկ ջոջ քարի մի կուշտ կայնաւ, ըսեց.—Ով Աստուած, ես էլ ի՞նչ էնիմ, ի՞մալ էնիմ։

Օր էդ թաւուր ըսեց, աղաչանք էրեց, Աստուած ըդոր ձէն լսեց. քար բացուաւ ու Մհերին մէջն առաւ։ Ձէն էկաւ թէ՝—Մհեր, դու պդի մնաս քարի մէջ, չուրի ցորնի հատ էղնի մասրի բարայ, նոր քարից դուս գաս։

Մկայ իդա սհաթին լէ մըչ քարին է Մհեր ու կ'ըսեն՝ ձին օր կ'շըռէ, քարից դուս կ'իգայ[1])։

---

[1]) Բ. վարիանտի վերջաբանը. «Մկայ Մհերն ու ուր ձին կենդանի մըչ էն քարին ին. տարին հինգ աւաք կատիկ (նաւակատիկ) Մհեր էն քարից դուս կ'էլայ, ախշար կ'աչքէ, մանայ էն քար։ Հրաման չ'կայ, օր քելէ ախշար. եր օր ցորնի հատն էղաւ մէկ մանսուր, գետին կ'խայինայ, Մհերն ու ուր ձին կ'գան ախշար. նոր Մհեր կուտուրում կ'էնի, վերջ կ'մարտիրոսուի։